


338.98

4-25

Մ. Մ. ԿԱՍՈՒՄՈՎ

17 FEB 2010

ԲԱՄԲԱԿԱՐՈՒԾԱԿԱՆ
Կ Ո Ո Պ Ե Ր Ա Ց Ի Ա



ՊԵՏԶՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

Պետերասի տպարան
Գրառ. № 6308 (բ.)
Հրատ. № 1616
Պատ. № 2233
Տիբ. 3000
▽

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԲԱՄՐԱԿԻ ԵՆԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խորհրդային Միությունն արտասահմանից բամբակ գնելու համար յուրաքանչյուր տարի 100 միլիոնից ավելի վոսկի ուղբլիներ եր ծախսում, մինչդեռ ամեն մի կոպեկ, ամեն մի ուղբլի, ծախսելով յերկրի շինարարության վրա, նրա ինդուստրացման, նոր խորհրդային տնտեսություններ և կոլտնտեսություններ կազմակերպելու վրա, վերջապես ծախսելով աշխատավորության կենցաղի բարելավման վրա յերկրի ներսում, ավելի արագ թափով մոտեցնում և մեզ սոցիալիստական շինարարության աշխատանքի վախճանին մեր յերկրում:

Համ. ԿԿ (բ) Կենտրոնական Կոմիտեն բամբակաբուծության տնայերի քաշքշուկը համարում և անհանդուրժելի: Յեկն առավել անհանդուրժելի լե այդ, յերբ բամբակ արտադրող խորհրդային հանրապետություններում կան բոլոր սովյալները և հնարավորությունները բամբակաբուծությունն այն աստիճանի ընդարձակելու, վորով մենք կարող կլինենք լիովին բավարարել վոչ միայն մեր տեքստիլ արդյունաբերության ընթացիկ կարիքները, այլ և ստեղծել հումուլթի պահեստի ֆոնդ, վորի շնորհիվ հնարավոր կլինի ավելի



21 MAY 2013

31.989

ևս ընդարձակել արդեն յեղած տեքստիլ ֆաբրիկաները և նոր, ավելի ուժեղ ֆաբրիկաներ կառուցել:

Բամբակաբուծության զարգացման համար կատարված բազմամյա աշխատանքները ցույց են տալիս, վոր յեթե կուսակցական, խորհրդային, միութենական և հասարակական կազմակերպությունները մեծ ուշադրություն դարձնեն բամբակաբուծության հարցերին, յեթե բամբակի հարցերում աշխատավոր գյուղացիության լայն զանգվածների շահագրգռվածությունը մեծանա, յեթե յեղած ուժերը և միջոցները լիովին համախմբված լինեն բամբակի շուրջը, յեթե վոռոգման համար ավելի վարկեր բաց թողնվեն, յեթե ամբողջապես ծանրաբեռնվի ունեցած յեվրոպական գյուղատնտեսական ինվենտարը, յեթե մեր վողջ գյուղատնտեսությունը սոցիալիստական հիմունքի վրա դրվի, ապա բամբակի պրորբեմը նույնպիսի հաջող լուծում կստանա, ինչպես փայլուն լուծում է ստացել հացահատիկային պրորբեմը Խորհրդային Միության կողմից:

1929 թ. հուլիսի 18-ին Համ.Կ (բ) Կ պատմական վորոշում հանեց՝ զնելով ԽՍՀ Միության բամբակի անկախության հարցը: Այդ վորոշման մեջ, ինչպես և Անդրյերկոմի, ԱԿԿ (բ) ԿԿ, Անդրկովկասի կառավարական որդանների և նրա ազգային հանրապետությունների հետագա վորոշումների մեջ մատնանշված են այն բոլոր ճանապարհները, բոլոր գործողությունները և միջոցները, վորոնց իրագործումը Խորհրդային Միությանը կդասի բամբակի անկախություն ունեցող պետությունների կարգը:

ԲԱՄԲԱԿԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՐԿՈՎԿԱՐՈՒՄ

Գյուղատնտեսության բամբակաբուծական ճյուղը Անդրկովկասի համար նորություն է: Բամբակաբուծությունը աշխտեղ վաղուց արդեն զբաղվում են, բայց իմպերիալիստական պատերազմը ծագելուց հետո, չեր հացի և բամբակի մեջ արժեքային փոխհարաբերությունները խախտվեցին, յերբ բանվոր ձեռքերի զինն սկսեց բարձրանալ, բամբակաբուծությունն Անդրկովկասի շրջաններում սկսում է նվազել, իր տեղը զիջելով ավելի պակաս աշխատանք պահանջող հացահատիկային մշակույթներին:

Յերբ իշխանության գլուխ են անցնում մուսավթականները, դաշնակները և վրացական մենշևիկները, բամբակաբուծության համար ծանր շրջան է սկսվում և նա ամբողջ գյուղատնտեսության հետ միասին կատարյալ անկում ապրելով, կատաստրոֆիկ վիճակի յե հասնում: Բավական է ասել, վոր 1920 թ. բամբակի ցանքի տարածությունը կրճատվում է մինչև 1000 հեկտարի:

Բեկում առաջացավ միայն խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո: Հաղթի լուեցին քաղաքացիական պատերազմի վերջին զնդակները, հաղթիլ ցըրվեց հրդեհների ծուխը, խորհրդային կառավարությունը ձեռնարկեց վերականգնելու գյուղատնտեսությունը:

Հաջվի առնելով Անդրկովկասի հնարավորությունները, վորպես խորհրդային տեքստիլ արդյունաբերության բամբակի ապագա բազայի, խորհրդային կառավարությունը մի շարք միջոցների յե դիմում բամբակաբուծությունն արագ վերականգնելու համար (սկըզբում թեկուզ մինչպատերազմյան սահմաններում):

11554-57

Բամբակացան գյուղացիների և պետական ու կոոպերատիվ բամբակալին կազմակերպությունների միջև փոխադարձ հարաբերություններն ամրապնդելու նպատակով, բամբակի ցանքերի համար մտցվում է կոնտրակտացիայի սխեմա, վորը տարեց-տարի ավելի և ավելի կատարյալ և չերկու կողմերի համար նպաստավոր ձևեր է ընդունում:

Բաղաճացիական պատերազմում աղքատացած, մեղքավոր, դաշնակ և մուսավաթական իշխանությունից թալանված գյուղացիությունը չէր կարողանում վերականգնել կրկին իր տնտեսությունն իր ուժերով: Դրա համար խորհրդային իշխանությունը մտցնում է կանխույթի սխեմա գյուղական տնտեսություններին, տալով նրանց գյուղատնտեսական ինվենտար, սերմեր, պարրիտանյութ, պարենային ու արտադրական տպ-բանքներ՝ նորմավորած գնելով և դրամով:

Նյութական լայն ոգնություն ցույց տալու հետ միասին ձեռք են առնվում ամեն տեսակ միջոցներ գյուղատնտեսությունը պրիմիտիվ, տնայնագործ, հը-նացած ձևերից մշակման և վարույթի կուլտուրական մեթոդների վերածելու համար: Բացվում է ագրոպուսկ-տերի ընդարձակ ցանց, շրջանները ծածկվում են դպրոցներով՝ գյուղատնտեսական անպարզիտությունը վերացնելու նպատակով, կազմվում է բամբակացան-ների միություն հատուկ բամբակարուծական կոոպե-րացիայի միջոցով: Այդ բոլոր համառ և անդուլ աշ-խատանքներն հետևանքն այն է լինում, վոր Անդլը-կովկասի բամբակացան շրջաններն արագություն վե-րականգնում են իրենց տնտեսությունները, տարեց-տարի աճելով և ընդարձակվելով:

Ստորև բերած աղյուսակը լուսաբանում է բամ-բակի բռնած տարածությունը աճումը, վորը ճշտված է չափերով:

ՏՄԲԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՅՏԱՐՆԵՐՈՎ

Թ ի վ ը	Աղբբե- ջան	Հայաս- տան	Վրաստան	Ընդ. ԱՄ Ֆեշ-ում
1923-24 թ.	14100	4400	300	18800
1924-25 թ.	81900	14500	3500	99900
1925-26 թ.	98000	14600	4000	116600
1926-27 թ.	101500	11600	5100	118200
1927-28 թ.	103700	10600	2800	117100
1928-29 թ.	111100	14300	6200	131600
1929-30 թ.	132000	13100	8300	153400

Ճիշտ է, առանձին հանրապետություններում պատահում էր, վոր բամբակի ցանքերի տարածու-թյունը նախորդ տարվա համեմատությամբ վորոշ չա-փով պակասում էր, բայց ընդհանրապես բամբակի տարածությունը համեմատած 1924-25 թվի հետ, վորը գյուղատնտեսության վերականգնման առաջին տարին է հանդիսանում, աճել է համարյա 8 անգամ:

Բամբակարուծության մեջ մեծացել է նաև գյու-ղատնտեսության սոցիալիստական սեկտորի տեսակա-րար կշիռը, մասնավոր կոլխոզներին:

	Աղբբե- ջան	Հայաս- տան	Վրաս- տան	Ընդա- մենը
1928 թ.				
Կոլխոզների թիվը...	150	31	—	181
Բամբ. տարած. հաղար հեկտ.	4100	100	—	4200
Ցանքի ամբողջ տարա- ծությունը % . . .	3,7	0,8	—	1,4
1929 թ.				
Կոլխոզների թիվը . .	371	63	65	499
Բամբակի տարած. հա- ղար հեկտ.	11000	1100	600	12700
Ցանքի ամբողջ տարա- ծութ. %	10,2	8,4	7,2	9,8

Թեպետև կոլիտոցների 1930 թվի աճման ընդհանուր գումարը դուրս չի բերված, սակայն դատելով բամբակի բերքի առանձին տվյալներով, կարելի չե պնդել, վոր սոցիալիստական սեկտորի տնտեսակարար կշիռն անցած տարի ավելի բարձր է չեղել, քան նախորդ բոլոր տարիներին՝ միասին վերցրած:

Սակայն բամբակի տարածության աճումը գյուղատնտեսության թե սոցիալիստական և թե անհատական սեկտորի մեջ չի կարող ծածկել այն ձախողակ գրությունը, վոր մենք նկատում ենք բերքատվությունը բարձրացնելու հարցում: Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն տատանումները, վոր նկատվում են բերքատվության մեջ տարեց-տարի:

Յ Ե Ն Տ Ն Ե Ր Ա Վ

Թ ի վ ը	Աղբբե- ջան	Հայաս- տան	Վրաս- տան	Ընդ. ՄՍՖ ԽՀ-ում
1923-24 թ.	6,2	6,5	4,8	6,0
1924-25 թ.	5,9	7,6	4,8	6,6
1925-26 թ.	6,0	9,2	4,8	6,3
1926-27 թ.	6,2	6,7	3,7	6,2
1927-28 թ.	6,3	10,8	7,1	6,7
1928-29 թ.	5,1	7,9	3,9	5,3
1929-30 թ.	4,2	6,2	3,2	4,3

Այսպիսով, սկսած 1924-25 թվականից, չեթե մի կողմ թողնենք 1927-28 թիվը, բերքատվությունը տարեց-տարի նվազում է: Այստեղից ել առաջանում է բամբակի հումուլթի հավաքի նվազումը տարեց-տարի: Այսպես, չեթե 1925 թվին ամբողջ Անդրկովկասում

հավաքվել է 74,1 հազար տոնն, ապա 1929 թվին բամբակի հումուլթի հավաքը նվազել է մինչև 56,3 հազար տոննի: Այս տողերը գրելու մոմենտին (1931 թ. հունվարին) 1930 թվի բամբակի բերքի իրացումը դեռ չի վերջացել, սակայն արդեն հնարավոր է ասել, վոր մթերման ամբողջ քանակը այնքան ել շատ չի գերազանցում նախորդ տարիների իրացման գումարից, չնայած բամբակի տարածությունն ընթացիկ տարում ընդարձակվել է:

Խորհրդային կառավարությունը միջոցներ է ձեռք առնում բամբակաբուծությունն ընդարձակելու՝ ինչպես ջրովի տարածությունների աճման, նույնպես և բերքատվությունը բարձրացնելու միջոցով: Յուրաքանչյուր տարի խոշոր վարկեր են բաց թողնվում մեծ ու փոքր ջրային շինարարությունների, նոր հողեր բաց անելու, շահագործման մեթոդների բարելավման և կանոնավորման համար, բամբակացաններին տրվում են զանազան սլարաբտանյութեր, բնակչության լայն զանգվածների մեջ խորացվում են ագրոնոմիական տարրական գիտելիքներ, բամբակաբուծական ճյուղը մշտապես լրացվում է բարձրագույն, միջին և ստորին ագրոպետոնալի նոբ կադրերով, սխտեմատիկաբար վերանորոգվում և ընդարձակվում են Անդրկովկասում չեղած ջրաբաշխական սխտեմները:

Ինչ ջանք և ուշադրություն չի հատկացվում նաև սերմային նյութերի բարելավմանը: Այժմ բոլոր ցանքերը կատարվում են բացառապես տնտեսավոր սերմերով: Սակայն չնայելով այդ ամենին, բամբակի բերքատվությունը նվազում է, հնգամյակով բամբակի անկախությունը համար նախատեսած դաշտերի վաճառական նշանակալից մասը չի ցանվում:

Ո՞րք և ինչի՞ մեջ և թագնված պլաններ թերա-
կատարման պատճառները և ի՞նչ և հարկավոր անել,
վորպեսզի Անդրկովկասը դառնա իրոք Խորհրդային
Միության չեղրորդ բամբակային բազան, վորպեսզի
հնգամյակի վերջում բամբակի տարածությունը միայն
Ադրբեջանում հասնի 500 հազար հեկտարի:

**ԻՆՉՆ Ե ԿԱՅԿԱՆԻՈՒՄ ՅԵՎ ՎԻՓԵՑՆՈՒՄ ԲԱՄԲԱԿԱՆԻՈՒԹՅՈՒՆԸ
ՉԱՐԿԱՅՈՒՄԸ**

Բամբակի ճակատի թե անցյալ և թե ներկա
ձեղքվածքների հիմնական պատճառը թագնված և նրա-
նում, վոր Անդրկովկասի կուսակցական և սոցիալիս-
տական կազմակերպությունները դեռ լիովին չեն
գիտակցել և լիովին չեն գնահատել բամբակաբուծու-
թյան նշանակությունը, վորպես Անդրկովկասի ամ-
բողջ գյուղատնտեսության ղեկավար ճյուղի:

Անդրբերկովի վորոշումների մեջ—«Բամբակի մը-
թերման կամպանիայի արդյունքների և դարնանացանի
նախապատրաստման մասին»—հենց այդպես էլ նըշ-
ված է.—«Անդրբերկովը գտնում է, վոր բամբակի
ճակատում ձեղքվածքի հիմնական պատճառը հանդի-
սանում է ազդկումկուսների և տեղական կուսկազմա-
կերպությունների կի կողմից բալլևիկյան ղեկավարու-
թյան բացակայությունը բամբակի ցանքերը նախա-
պատրաստելու, բամբակը մշակելու, հավաքելու և մը-
թերելու գործում»:

Զնայելով Համկի(բ) կի 1928 թ. հուլիսի 18-ի
վորոշման, Անդրկովկասում բամբակաբուծությանը
վերաբերվեցին բոլորովին վոչ վորպես առաջնակարգ
և ամենակարևոր տնտեսա-քաղաքական կամպանիայի:

Այդպիսի բարենդուլվածք և անդորրություն բռնված
էյին բոլոր կազմակերպությունները, սկսած կենտրոն-
ներից և վերջացրած ստորադասներով:

Բամբակաբուծական կոոպերացիայում և այլ կազ-
մակերպություններում ալ ուղորդունիքական միջնոր-
դությունները պլանների թեթևացման մասին նրանց իր-
ք և թե անիրականանալի լինելու պատճառով, դյուղում
դասակարգային քաղաքականության խեղաթյուրումը,
կուլակություն թերագնահատությունը, միջանի դեպ-
քերում նուշինսկ կուլակության ուղղակի հովանավո-
րումը և նպաստավորումը, պատժողական քաղաքա-
կանության սխալ գործադրությունը դյուղում՝ կուլա-
կային տարրերի վերաբերմամբ, վորոնք դիտավորու-
թյամբ խանգարում էյին ցանքեր անելուն և չէյին
հաճնում բամբակը, անարգել և առանց պատժվելու
կուլակներին միջակ և չեղրեմի: Ել ուղղակի չքավորներ
դարձնելը, վերջապես վորոշ պատասխանատու աշխա-
տակիցների մեջ չեղած բամբակաբուծությունն ընդար-
ձակելու ակնհայտի հակառակորդները,—այդ ամենը
բանն ախտեղ հասցրեց, վոր Անդրկովկասը 1930 թվի
բամբակի պլանը հաղիվ կիսով չափ կատարեց:

Յերկար տարիներ մեղ մոտ անպատիվ կերպով
ամեն տեսակի խոսք ու զրույց եր լինում, թե բամ-
բակաբուծության համար տրակտորները, գութանները
և գյուղատնտեսական այլ մեքենացրած ինվենտարը
քնատակար են, կամ, համենայն դեպս, անոգուտ են:
Յեվ միայն վերջին ժամանակ իրելի կողմնակիցները՝
գյուղատնտեսության ամենապրիմիտիվ-նահապետական
ձևերի պաշտպանները՝ արժանի պատասխան ստացան
հենց կյանքից իրենից, վորն ակնհայտ կերպով ցույց

տվեց հողային խոշոր տնտեսութեան՝ կոլտնտեսութեան
և խորհրտնտեսութեան ամբողջ առաջնությունը մանր-
մուշեր, բաժան-բաժան յեղած, անհատական գյուղական
տնտեսությունից, այլ և դյուրատնտեսութեան կատա-
րելագործված (մեքենայացում և տեխնիկացում) պրո-
ցեսների կիրառման տարբերությունը:

Ձ Ո Ւ Ր

Համկ(բ) 1929 թ. հուլիսի 18-ի իր վորոշման
մեջ շատ մեծ ուշադրություն է դարձրել այդ հարցին:
Բամբակի պրոբլեմը լուծելու համար դա ամենաուղիղ
մոտեցումն է, վորովհետև բամբակաբուծման զարգաց-
ման հաջողությունն ապահովող յերեք ելմանտներից՝
ջրից, հողից և բանուժից՝ ամենավճռական և ամենա-
հզոր ֆակտորը մեր պայմաններում հանդիսանում է
հատկապես ջուրը:

Ինչպես են աշխատել և ինչպես են իրագործել
ջրային տնտեսություններն իրենց վերապահած ֆունկ-
ցիաները մի շարք տարիների ընթացքում:

Պատասխանի համար շատ հեռու չպետք է գնալ:
Վերցնենք այն ժամանակամիջոցը, վոր հտջորդեց բամ-
բակի մասին Համկ(բ) պատմական վորոշման, վորը
պարտավորեցնում էր անմիջապես և ամենալուրջ կեր-
պով դիմել ջրաբաշխության գործին:

Անդրյերկոմի 1930 թվի դեկտեմբերի 22-ի վո-
րոշումը միանգամայն սպառիչ պատասխան և տալիս
վերը դրած հարցին:

«Բամբակը ջրելու համար ջրաբաշխական սիս-
տեմները ժամանակին կազմակերպելու նախապատրաս-
տությունը բոլորովին բացակայում է Անդրջրային

տնտեսությունների և հանրապետական ջրային տնտե-
սությունների մոտ, չի լեղել ջրի ռացիոնալ ոգտագոր-
ծում, մանավանդ ամառվա ջրի, առաջին հերթին բամ-
բակի համար», —ասում է Անդրյերկոմի վորոշումը:

Նույն վորոշման այլ կետում նշվում է. —«Արտե-
րին ժամանակին ջուր չտալը, վորի հետևանքով ար-
տերը չորացան, կուս. և խորհ. կազմակերպություննե-
րի կողմից ջրային սիստեմը կառավարելու կազմակեր-
պումը, նմանապես ջրհանների նորոգումը և գոյու-
թյուն ունեցող սիստեմների ոգտագործումը լիովին
թողնված էյին ինքնահոսին և ջրպետների ու միլաբ-
ների հայեցողությանը, առանց կուսակցական և խոր-
հրդային կազմակերպությունների կողմից միլաբների
և ջուլարների կազմը վորեն ստուգման յենթարկելու:
Դրա հետ միասին բացակայում է ջրտնտեսություննե-
րի ղեկավարությունը տեղական վոռոգման սիստեմնե-
րի բարեկարգման, նաև ջրհան տնտեսության նորոգ-
ման և կանոնավոր ոգտագործման մեջ»:

Այդ ամենին պետք է ավելացնել, վոր մինչև որս
ջրային ռեսուրսներն ոգտագործելու համար կիրառված
միջոցներով ջրի միայն մի յերրորդ մասն էր ոգտա-
գործվում ռացիոնալ և եֆեկտավոր կերպով, մանա-
վանդ Մուղանում (Ադրբեջան): Մնացած մասն իզուր
ծախսվում էր, վորպես արդյունք վոռոգման սիստեմ-
ների քայքայված լինելու, ջրի ոգտագործման թալան-
չիական ձևերի, ջրաբաշխական սիստեմներում տիրող
քառսի և անարխիայի, վորպես արդյունք նրանց վրա
հարկավոր ուշադրություն չդարձնելու վոչ միայն ջրա-
տնտեսության որգանների, այլ և կուսակցական, խոր-
հրդային և արհմիութենական ամբողջ ստորին ապա-
րատի կողմից:

Հողամասերի մի մասի ջրով հեղեղված լինելը, մինչպես կողքին մյուս արաբերն այրվում են անջրությանից, վոտոգումների աշխատանքում պլանաչափության, կարգապահության, ջրելու որացող ցալին ժամկետների բացակայությունը, անփուլթե և անտնտեսավար վերաբերմունքը դեպի ջրհան մեքենաները, քյահրիզները և չարխերը, թմբեր կապիլու աշխատանքներին քայքայումը, գյուղացիների լաջն դանդաղածներին գյուղատնտեսական աշխատանքների մեջ քաշելու անսկզբունքաչափությունը, վճռական միջոցներ ձեռք չառնելը՝ ջրելու բամբակի ցանքին հատկացրած, բայց հացահատիկային կուլտուրաներ ցանած հողամասերը, — այդ ամենը գոյություն է ունեցել և գոյություն ունի այժմ եր, այնինչ ժամանակին բամբակի արտերի վրա թողած յուրաքանչյուր խորանարդ ջուրն ավելի յե մոտեցնում մեզ մեր դրած նպատակին — բամբակի անկախությունը:

1931 թիվը պետք է դառնա արտասոհմանյան բամբակի ներմուծումը դադարեցնելու առաջին տարին: Իրագործելով նախատեսած պլանները և ղեկավար որդանների դիրեկտիվները բամբակաբուծության մասին, հնարավոր կլինի հրաժարվել հումուլթի ներմուծումից: Դրան համապատասխան են ծրագրված 1931 թվի գարնանացանի կամպոնիայի բոլոր պլանները: Դրա մասշտաբները պարտավորություն են դնում մեզ վրա ժամանակին և լուրջ կերպով զբաղվել բամբակի ցանքսի պատրաստություններով: Բայց յուրացրել են արդյոք ջրատնտեսները նախորդ տարիների դասերը և սխալները:

Գարնան համար սկսած նախապատրաստական

կամպանիան դարձյալ ունի բազմաթիվ կազմակերպչական սխալներ: Ջրելու պլանները համարյա բոլոր ջրջաններում հիմնավորված չեն և հաճախ իրենցից միայն մերկ թվեր են ներկայացնում, վորոնք չեն համապատասխանում պլանային իրական առաջադրանքներին: Վորոշ տեղերում հողամասի հավելումը կատարված է ի հաշիվ աշնանացտն հացահատիկների կրճատման: Տեղերում դեռ չեն բնաված բամբակի ջրջանները սնուցող ջրային սխտեմների վերնամասերում մշակվող և ջուր պահանջող կուլտուրաների կրճատման հարցը և ջրատնտեսության որգանները դեռ չեն շտապեցնում այդ հարցի լուծումը: Վերացրած ջուլարների և միրաբների փոխարեն ջրային լիազորներ դեռ չեն նշանակված: Ինքնահոսը, անտարբերությունը, դանդաղաշարժությունը և անկենդան ձևակառուցությունը կարմիր թելով անցնում են ջրային տնտեսությունների կազմակերպությունների աշխատանքի միջով նշած առաջադրանքները կատարելու վերաբերյալ: Ահա թե ինչու, չնայելով գոյություն ունեցող ջրաբաշխական սխտեմների վերականգնման բնագավառում ձեռք բերած նվաճումներին և նոր ջրովի հողեր ստանալուն՝ Անդրկովկասյան ջրատնտեսության ընդհանուր դրությունը դեռ շատ անբավարար վիճակի մեջ է գտնվում: Ջրհորներով և քյահրիզներով վոտոգելը դեռ լիովին չի վերականգնված: Պատերազմից առաջ ջրհաններով ջրում էին 25 հազար գա բամբակի ցանքս, իսկ 1929 թվին մենք ունեյինք միայն 20 հազար գա: Ահարածեշտ է, վորքան կարելի չե շուտ վերականգնել ջրհանները, վորը հնարավոր կլարձնի նրանց վոչ միայն ուցիտնալ կերպով սգտագործել, այլ և իջեցնել վոտոգումներին ինքնարժեքը:

Լարված ուշադրութիւն պետք է դարձնել նաև ճարտարագիտական սիստեմների շահագործմանը, մանավանդ Մուղանում (ԱՍԽՀ), վորտեղ ջրատար ցանցի բացակայութեան պատճառով և ջրի խախտառակ բաշխման շնորհիվ յուրաքանչյուր հեկտարի վրա հինգ տնգամ ավելի ջուր է ծախսվում, քան Միջին Ասիայում:

Անկասկած է, վոր Անդրկովկասի խորհրդայնացման տարիներում ջրատեսութեան որդանները բավական աշխատանք են կատարել, բայց ստացած հետեւեւանքները բավականաչափ կորցնում են իրենց արժեքը, շնորհիվ խոշոր թերութիւնների, վորոնք նկատվում են այդ որդանների գործնական աշխատանքներում:

ՊԵՏԵՐՎՈՐԱԿԻ ՅԵՎ ԲԵՐՔՆԵՎՈՒԹՅՆ ԲՈՐՁՐԵՑՄԵՆ ՀԱՄԱՐ

Սկզբում մեր առաջ բերած աղյուսակում պարզ լուսաբանված են այն տատանումները, վորոնք տեղի յեն ունենում Անդրկովկասի բերքատուութեան հարցում:

Մենք գիտենք, վոր մեր բամբակային տնտեսութեան ընդարձակման համար մղվող պայքարը պետք է ընթանա վոչ միայն ջրովի տարածութիւններն ընդարձակելու գծով, այլ և վոչ պակաս ջանք պետք է դրվի ջրովի տարածութիւնները տնտեսապես ընտելացնելու և բերքատուութիւնը բարձրացնելու գծով: Առանց դրան բամբակի պրոբլեմը հաջող լուծում չի կարող ստանալ:

Խնչ ցուցանիշներ ունենք մենք բերքատուութեան բնագավառում:

Անցյալ տարվա բերքը Անդրկովկասում մի քիչ ավելի յեր նախորդ տարիներից և հավասար էր 28

իթի մի հեկտարից: Պետք է կտրականապես ասել, վոր նկատի առնելով ունեցած հնաբովորութիւնները, այդ թիվը չափազանց փոքր է: Դեմի (անջուր) տարածութիւնները Միջին Ասիայում ավելի բարձր բերք են տալիս, քան մեղ մոտ ջրովիները, այնինչ լավ բերք ստանալու բոլոր նախադրեւանքները մենք ունենք: Մեր հողը Միջին Ասիայի հողից վատ չէ, կլիմայական պայմանները և վեգետացիայի (աճեցման) որենքները համարյա նույնն են, բայց մեղնում բերքատուութեան հարցերին քիչ ուշադրութիւն են դարձնում, մեղնում հողի մշակումը շատ վատ է տարվում, մեղնում շարքային ցանքեր քիչ են արվում: Մենք ունենք մի շարք վաղուց հատուկացած անհետաձգելի հարցեր, վորոնք դեռ ևս լուծված չեն, վոր նույնպես աղղում է բերքատուութեան վրա (որինակ, քոչվորների հարցը):

Այսպես, որինակ, Թարթառի ջրային սիստեմի (ԱՍԽՀ) ջրջաններում ապրող ազգաբնակչութիւնը դաշտային ամենածանր աշխատանքների ժամանակ՝ բամբակի բուզը լցնելու, քաղհանի ժամանակ՝ հեռանում և յալլաղները, թողնելով բամբակն իր բախտին:

Ուստի զարմանալու վոչինչ չկա, վոր նրանց ցանքերը, թեև քիչք անգամ ջրվում են, ավելի քիչ բերք են տալիս, քան մի անգամ ջրվածները: Իբրև որինակ կարելի յե բերել Յեվլախի ջրջանում գտնվող Յենակ վաստականների գյուղը, վոր վոչ բավականին յեվրոպական ինվեստար ունի, վոչ հանքային պարարտանյութեր, վոչ առատ ջուր: Այդ գլուղացիները կարողանում են սքանչելի բերք ստանալ ցանքերը խնամքով մշակելու միջոցով, վորը, ինչպես հայտնի յե, մասամբ լրացնում է ջրի պակասը, սերմի վորակը և նույնիսկ ուշացած ցանքը:



Համ Կ(բ)Կ վերոգումը պարտավորեցնում է մեզ բաժնեացնել շրջաններում բաժնեակի բեռը հըճ-գամյակի վերջում 70 % -ով: Կառավարչական և կոոպերատիվ կազմակերպությունները պարտավոր են ապահովել անհրաժեշտ միջոցներով և նյութերով բամբակի շրջանները: Իսկ կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ ստորին ապարատից պահանջվում է լավ կարգի գցած և պարզորոշ կազմակերպչական աշխատանք՝ ցանքի կամպանիան անցկացնելու գործում:

Նախորդ տարիների պրակտիկան ցույց է տվել, լուր կազմակերպչական աշխատանքի գծով մենք խոշոր ձեռքվածքներ ենք ունեցել: Բամբակի ծիրերը յե-րևալու մոմենտից սկսած մինչև նրա հասունանալը հարկավոր է 96 շոգ որ: Մշակելու և ջրելու պայմանները նպաստավոր լինելու դեպքում ժամանակին կատարած ցանքը գեղեցիկ բերք է տալիս: Զնայելով այդ բանին, շատ շրջաններում ցանքն ուշացնում են, վոր քիչ բերք տալու պատճառ է դառնում:

ՄԱՅԻՍԻՆ ԿԵՍԵՔ Ե ԼԱՎ ԵՐԱՐԱՑՆԵԼ ՎՈՐ ՄԵԳ ՄՈՈ—ՄԱՅԻՍԻՆԻՎԿԱՍՈՒՄ—ԳԱՆՆԵՐՈՒ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԿԵՐՔ ՄԱՅԻՍԻ 10-6 Ե:

Բերքատվության առտիճանի վրա քիչ չեն աղդում նաև ագրոկոմպլեքսային ձեռնարկումները: Աշխանային վարը հեկտարին 40 կգրմ ավելի բերք է տալիս, պարարտացման ուղիղ կիրառումը հեկտարին 350 կգրմ տարբերություն է տալիս, շարքացանները և կուլտիվատորները բերքը հեկտարին մոտ 200 կգրմ ավելի չեն բարձրացնում: Այդպիսով աշխանավարը, պարարտանյութերը և շարքացանը հեկտարին 37-38 փութ հուսմուլթի բերքի տարբերություն են տալիս: Մշակելու

պնդատնտեսական բոլոր միջոցները դործ դնելով, հնարավոր կլինի հասնելու, գուցե և անցնելու բերքատվության այն սահմանները, վորոնք նախատեսված են Համ Կ(բ)Կ Կոմիտեի հուլիսյան վորոշման մեջ:

Իրա համար անհրաժեշտ է լայն չափերով ժողովրդականացնել այդ միջոցները, դրանց նշանակությունը պետք է հայտնի դարձնել բամբակացանների ամենալայն զանգվածներին:

Գյուղատնտեսություն և ցանքային կամպանիայի հետ ուղղակի կամ անուղղակի կապ ունեցող բոլոր կազմակերպությունների ընդհանուր համերաշխ ջանքերով միայն պետք է ստեղծվեն պայմաններ ագրոկոմպլեքսային բոլոր միջոցները կյանքի մեջ անցկացնելու համար:

Մինչև այժմ այդ բնագավառում մեծ լսառնաշփոթություն կար: Այդ մասին վկայում է թեկուզ հենց ձմեռային տրաթ անցկացնելը: Լավ թե վատ, բայց այնուամենայնիվ Անդրջրտնտեսությունը պատրաստվեց հիշյալ կամպանիան անցկացնելու, իսկ տեղերում այդ հարցով ամենևին չեն դադարում, նրա վրա ուշադրություն չեն դարձնում: Այն դեպքում, չերբ բամբակի վերաբերմամբ յուրաքանչյուր ձեռնարկում անցնում է դասակարգային կատարի կովի միջով, տեղերը չեն ղեկավարում բամբակացաններին ձմեռային տրաթը և ագրոնոմիական այլ միջոցներ անցկացնելու գործում: Այդ ոպորտունիստական այդ տեսակ գործունեությունը շնորհիվ ձմեռային տրաթի պլանը լիովին անհաջողության մատնվեց:

Անհրաժեշտ է հույս պես նշել, վոր տեղերում չեղած ագրոպերսոնալը բավարար չափով չի լծվում ագ-

րոմինիմումը կատարելու և բերքատվությունը բարձ-
րացնելու գործին:

ՄԵՔԵՆԱՑԱՑՈՒՄԸ ՈՒԹԵՂ ԼԺՆԿ Ե ԲՆԲԱՆՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐՁ- ՐԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Բամբակաբուծության զարգացումը Անդրկովկա-
սում սաստիկ կաշկանդվում եր շնորհիվ այն հանդա-
մանքի, վոր բամբակի շրջանները բավականաչափ ա-
պահովված չէին լեվրոսական գյուղատնտեսական ին-
վենտարով և քաշող ուժով: Հետևյալ աղյուսակը ցույց
ե տալիս, թե վոր աստիճան շրջանն ապահովված ե
ինվենտարով և բանտավարով ¹⁾:

	Բան- տավ.	Գու- թան- ներ	Արոր- ներ	Փոց- ներ	Ցա- նիչ- ներ
ԱՍԽՀ					
Մեկ տնտեսության	1,30	0,20	0,50	0,15	—
100 գա ցանքի . .	53	6,10	11,30	8	—
ՀԱՍՀ					
Մեկ տնտեսության	0,50	0,08	0,50	0,23	—
100 գա ցանքի . .	49	3,70	11,80	12	0,01
ՎԱՍՀ					
Մեկ տնտեսության	1,00	0,12	0,70	0,26	—
100 գա ցանքի . .	56	4,70	14,10	11	0,06

Վերջին յերկու տարում գյուղատնտեսական ին-
վենտարի ներմուծումը բավական բարձրացավ, սա-

¹⁾ Տվյալները վերցրված են 1927 թվի մարդահամարի նյու-
թերից:

կալն վոչ այն սահմաններում, վոր լրովին բավա-
րեչին Անդրկովկասի պահանջները: 1930 թ. որինետիր
տվյալներով Անդրկովկասի բամբակալին շրջաններում
կար 31.700 գութան, 33.900 փոցիս, 975 ցանիչ, 3.500
կուլտիվատոր, 480 տրակտոր:

Յեթե գյուղատնտեսական ինվենտարի անբավա-
րար ներածումը փաստ ե, վորի հետ առայժմ պետք ե
հաշտվել, մյուս յերևութի հետ՝ ունեցած ինվենտարը
վոչ լրիվ բեռնավորելու հետ, նրա վոչ ռացիոնալ և սակավ
եֆեկտավոր ոգտագործման, յերբեմն անգամ ուղղակի
չոգտագործելու հետ, իհարկե, պետք ե կատաղի կռիվ
մղել:

Անդրկովկասի վորոշման առաջին հատվածի 2-րդ
կետը նշում ե բամբակի հողի համար մեխանիկական
ուժի ոգտագործման անթույլատրելի անշնորհ կազ-
մակերպությունը: Հիւրավի, վոչ մի շրջանում ինվեն-
տարը մենք լրիվ չենք բեռնավորել:

Տրակտորի նորմալ արտադրողականությունը կամ-
պանիալի ընթացքում հավասար ե 150—200 գա, բայց
շատ կոլխոզներում և սովխոզներում տրակտորի աշ-
խատանքը կատաարոֆիկ ցած ե: Նույնն ե նկատ-
ված բամբակի ցանիչի և ալլ մեքենաների վերաբեր-
մամբ:

Յեթե արդյունաբերության մեջ այս կամ այն
դադգյահը կամ մեքենան լրիվ բեռնավորվում չի ու-
նենում, մենք հավար ենք գոռում, բայց միաժամա-
նակ անտարբեր ենք մնում, յերբ բամբակի ցանող մե-
քենաները 20 գա փոխարեն 4 գա կամ ալլեկ պա-
կաս են մշակում, իսկ տրակտորները կամպանիալի ամ-
բողջ ընթացքում 20—30 գա լեն վարում: Մինչև

այժմ մենք հարց չենք բարձրացրել մեքենաների պարապուրդի մասին: Պետք է բացարձակ ասել, վոր դրա մեղքն ընկնում է նաև հասարակական, բայց ամենից շատ կոռուկերատիվ կազմակերպությունների վրա:

Բամբակի ինվենտարը բաժանելու պրակտիկայում մենք ակնհայտես ելինք այնպիսի փաստերի, վորնք կուսակցական 1 խորհրդային դժի սովորական զեղծումների շարքից դուրս են մնում: Սերմային ինվենտարը շատ տեղերում մնում էր բացթողաց, անձրևի, ձնի տակ, այնինչ դրացի շրջանում սերմի սուր կարիք էր զգացվում և դրա պատճառով սերմանման կամ պանիան ձախողում էր: Իսկ մենք դեռ վճռական միջոցների չենք դիմել այդ ակնհայտի ֆրասարարությանը վերջ տալու համար:

Ամենին սխալված չենք լինի, չեթե ասինք՝ ինվենտարը բանեցնելու գործը բոլոր շրջաններում իր բարձրությունից վրա կանգնելուց շատ հեռու չէ: Մեքենաների պարապուրդների դեմ վճռական կռիվ մղելու փոխարեն, մեքենաներն որակյա 20 ժամ աշխատեցնելու փոխարեն, մենք լսում ենք զանազան դատողություններ արտասանմանից նոր մեքենաներ բերել տալու անհրաժեշտություն մասին:

Իհարկե, այս կամ այն դիրեկտիվը կատարելն անհնարին համարել՝ պատճառաբանելով մեքենաների անբավարար քանակը, ավելի հեշտ է, քան թե ունեցած մեքենաներն այնպես աշխատեցնել վոր հնարավոր լինի գալ տարի հասնել բամբակի անկախություն և գյուղացի-բամբակացանների զինել արդեն ունեցած ինվենտարով:

Նոր մեքենաների՝ նշված ուժեղացրած ներմու-

ծումը Անդրկովկաս որակարգից չի հանում ունեցած ինվենտարի 100% -ով բացիսնալ ոգտագործումը:

Ինվենտարի մասին խոսելիս չի կարելի չըշտփել մեքենաների պահուսնի մասերի հարցը: Այստեղ ևս բանը լավ չի: Պահուսնի մասերը ժամանակին չբերելը և նրանց անկանոն բաշխումը, տեսակների տարբեր-տարբեր լինելը և այլն—այդ ամենը պատճառ են դառնում, վոր նրանք անգործ կանգնած են մնում:

Գյուղատնտեսություն մեքենայացման բնագավառում նշմարած վերահիշյալ թերությունները պահանջում են անմիջապես լուծել մի շարք հարցեր, առաջին հերթին պետք է ուժեղացնել Զակսելխոդսնաբի ղեկավար դերը և կազմակերպել շրջանային բազիսային պահեստներ գյուղատնտեսական գործիքների և նրանց պահուսնի մասերի:

Դրա հետ միաժամանակ պետք է ընդարձակել մեքենատրակտորային կայանների ցանցը և մեքենաները չբաժանել մանր պարտիաների:

Անդրկովկասում 4-րդ ՄՏԿ կազմակերպելու շնորհիվ անցյալ տարի նրանց աշխատելու շրջաններում բամբակի ցանքերը 2 շաբթով ավելի շուտ վերջացան, քան նախորդ տարիներում:

Այժմ, չերը վերջացել է գյուղատնտեսություն վերականգնման շրջանը և մտել ենք նրա վերակառուցման շրջանը՝ գյուղատնտեսությունը սոցիալիստական ուխտների վրա դնելու շրջանը— գյուղատնտեսություն մեքենայացման և մեխանիզացիայի հարցերին ստանում են ավելի աշխատական բնույթ և պահանջում են համակենտրոնացած ուղղորդություն կուսակցական, խորհրդային և կոոպերատիվ ապարատի կողմից:

պերացիայի բաշխման ցանցի աշխատանքները, թե նրա համար դասակարգայնորեն-տոկուն աշխատավոր-ներ չպետք է ընտրել և վոր գլխավորն է, չպետք է կապ հաստատել սպառողական և բամբակաբուծական կոոպերացիայի միջև:

Բամբակաբուծութան զարգացման նպաստող այլ միջոցներից կարևորը շրովի դարձրած նոր հողա-մասերի լայնածավալ տարածութունները բնակեցնե-լը և հողն ընտելացնելն է: Անցյալ տարի Ադրբեջանի շրջանը դաղթեցրած և 500 ընտանիք Ուղբեկստանից: Մոտակա ցանքային կամպանիայի փամանակ Հյուսիս-սային Կովկասից, Ուկրաինայից և Միջին Ասիայից պետք է դան Սալան-Մուղանի շրջանները նորից 3500 ընտանիք:

Մեծ չափերով գաղթելուն դեռ ևս արգելք են հանդիսանում մալյարիայի համաճարակները, վոր առանձնապես սարսափելի յեն Սալանի, Գյուլշայի, Ղաբաբադի, Ուջարի և այլ շրջաններում: Մի շարք վո-ոռգման սիստեմների անկանոն վիճակը և ստորերկ-րյա ջրերի առատութունն այդ վայրերը ճախճալին են դարձնում և մալյարիա առաջացնում, վոր սաստիկ անդրադառնում է տեղական աղգաբնակչության աշխատանքի արդյունավետութան վրա: Մալյարիայի դեմ կռվելու համար անհրաժեշտ են կանխող միջոցներ, և պետք է հուսար, վոր ԱՍՖՆՀ կառավարութունը դե-րախանապես կլուծի այդ խնդիրը:

ԲԱՄԲԱԿԱԲՈՒԾԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱԿՆԵՆ ՕՅՎ ԲԱՄԲԱԿԻ ՀՆԳՈՄՑՈՒԹՅՈՒՆ ՕՅՐԻՈՐԳ ՏՈՐԻՆ

Բամբակաբուծական կոոպերացիայի աշխատանքը կոնտրակտացիա, գարնանային ցանքային կամպանիա անցկացնելու, բամբակի բերքը իրացնելու խնդիրնե-րում դարձյալ մի շարք խոշոր սխալներ է, ունեցել վորի

հետևանքներն անդրադարձել են այժմս կատարվող գնման կամպանիայի արդյունքների վրա:

Մինչև 1928 թիվը ցանելու և բերքը հավաքելու ամբողջ աշխատանքը տանում էին պետական բամբա-կային կազմակերպութունները՝ բամբակազտիչ գոր-ծարանների վարչութունները և վարկային ընկերու-թյունները:

1928 թվից այդ ֆունկցիաները հանձնվեցին բամ-բակաբուծական կոոպերացիային, վորը անփորձու-թյան, անպատրաստութան, բյուրոկրատիզմի, ծանրա-շարժութան և ինքնահոսով աշխատելու պատճառով չկարողացավ կատարել իր առջև դրած խնդիրները:

Բամբակաբուծական կոոպերացիայի գործնական աշխատանքներում թերութուններ էլին նկատվում վոչ միայն կազմակերպչական գծով, այլ և աղավաղ-վում եր կուտակցութան դասակարգային դիժը գաւ-լում: Այսպես, որինակ, կոնտրակտացիա էլին կապում կուլակային տարերի տնտեսութունների հետ, նրանց էլին բաց թողնում այն վարկերը, վորոնք նախորդ նշանակված էլին միջակներին և չքավորներին: Բամ-բակի կոոպերացիայի ստորին ապարատում բուն էլին դրել դասակարգային թշնամիները, վորոնք խախ-տում էլին կոոպերացիայի առանց այն էլ թույլ աշ-խատանքը:

Ստորին աշխատավորների վորակական կազմը, նրանց կտրվածութունը մասսաներից, արհամարհանքը աշխատանք տանելու չքավորության և բաաբակու-թյան մեջ՝ վորոնք լինելու յեն խորհրդային իշխա-նության հավատարիմ հենարանը գյուղում, տեղական կազմակերպութունների հետ փոխադարձ հարաբերու-թյամբ չկապվելը, նախաձեռնության բացակայու-թունը և իրենց գործունեյության շրջանը չճանաչելը, այդ ամենը հասցրեց առաջադրանքների խախտման, հասցրեց մինչև այնտեղ, վոր կոնտրակտացիայի պայ-

մանագրի չարամտորեն խախտողները վոչ միայն անպատիժ ելին մեռում, այլ և հաճախ խորամանկութեամբ ոգնութիւն ելին ստանում կոռուպցիայից: Դեպքեր են լինել, չիր կոնտրակտացիոն պայմանագիր են կնքել աշխարհի «ցանքարարներին» հետ, վորոնք վոչ մի առնչութիւն չեն ունեցել բամբակաբուծութեան հետ և ընդհանրապես զրուգատնութեան չեն, ինչպես, որինակ, վարսավիրների հետ:

Ուստի ամեն տարի ցանքերը լրիվ կերպով չեկին կատարվում: Անցյալ տարի թերացանքերը ԱՄՆՀ կազմում ելին պլանային ամբողջ տարածութեան 30,30%, Հայաստանում — 18,30%: Անդրկովկասում բոլոր ցանքարարներից հումուլթը հանձնելու համար չներկայացան 20.000 մարդ: Միայն վերից չեղած խիստ ճնշման տակ կոռուպցիայի ստորին աշխատակիցներն սկսեցին կազմել չարամտորեն ցանք չանողների և չհանձնողների անվանացուցակը և ալգալիսիք մեծ հապաղումով հանձնվեցին դատական օրգաններին:

Բամբակամթերման ընթացիկ կամայանիայում մեր պլանների խախտում ունենք նաև կոլխոզների հատվածի գծով: Այդ տխուր փաստը կոլխոզների ներսում չլուծված մի շարք կազմակերպչական հարցերի հետեանք է: Մենք գիտենք, վոր շատ կոլխոզներում աշխատանքի կազմակերպման, ինվենտարի և կենդանի շարժող ուժի ռացիոնալ ոգտագործման հարցերը պատշաճ բարձրութեան վրա չեն կանգնած: Թվում է, վոր այդ պայմաններում համապատասխան կազմակերպութիւնները պարտավոր ելին առանձին ուղադրութիւն դարձնել կոլխոզային սեկտորի վրա: Սակայն պետք է պարզ ասել, վոր կոլխոզները մինչև որս դեռ չեն զգում սիստեմատիկ, մեկին և վստահ ղեկավարութիւն՝ իրենց գարնանացանի կամպանիայի նախապատրաստական աշխատանքներում վոչ միայն կու-

սակցական, խորհրդային և կոռուպցիայի կազմակերպութիւնների կողմից, այլ և Կոլխոզկենտրոնի կողմից:

1930 թվին ամբողջ Անդրկովկասում ցանքսի թերակատարումը ահագին տոկոս էր կազմում: Այստեղից ալ բխում է բերքատվութեան ձախողումը: Այդ բանը նրանից առաջացավ, վոր կոռուպցիայի կուսակցական և խորհրդային ստորին ապարատի հետ միասին անկարող յեղավ բայլէիկորեն կազմակերպել զրուգացիական և կոլխոզային մասսաները: Անդրկերկրային կոմիտեն իր վորոշման մեջ գտնում է, վոր այդ ճեղքվածքը հետեանք է.

«Հանրապետական կոմիտեների և տեղական կուս. կազմակերպութիւնների ուղղակի անբավարար ղեկավարութեան հետեանքով՝ ցանքային պլանների իրագործման և բամբակի դաշտերի մշակման ասպարիղում»:

— «1930 թվի ցանքային ամբողջ կամպանիան ինքնահոսի թողնելու, բամբակացանների վրա պետութեան սահմանած առաջադրանքները կատարելու ուղղութեամբ տնտեսա-կազմակերպչական ազդեցութիւն չգործելու»:

— «Կուսակցական, կոմյերիտական և արհեստակցական կազմակերպութիւնների քաղաքական և մասսայական կազմակերպչական աշխատանքի թուլութեան»:

— «Նախաձեռնութեան միանգամայն անբավարար ծավալման՝ կոլխոզականներին, բատրակներին, չքավոր ու միջակ և կանացի մասսաներին պայքարի մեջ քաշելու՝ բամբակի բերքատվութիւնը բարձրացնելու, ժամանակին հավաքելու և հանձնելու համար»:

— «Կուլակութեան դեմ պայքարի թուլութեան և աշխատավոր մասսաներին միանգամայն անբավարար կազմակերպման՝ կուլակային ուժեղացած հակախորհրդային ագիտացիային դիմադրելու համար»:

— «Ամեն տեսակի ոսկորաւնիստական թեւա-
նիւրի շտկումն ուշացնելու, դասակարգային
ուելու և բամբակային կամպանիայում աշխատող
նիստական գործունէութեան ցուցաբերման
վարար, վճռական պայքար մղելու կուակային տնտ-
սութեաններին հաստատուն առաջադրանքներ տալու
և այն նրանց չհասցնելու»:

Բոլոր այդ սխալները պետք է հաշվի առնվեն և
ուշի-ուշով ուսումնասիրվեն, վորպեսզի նորից չկրկն-
վեն, վորովհետև բամբակի հնգամյակի յերրորդ տար-
վա պլանները պետք է կատարվեն առանց թերացում-
ների:

Բամբակաբուծական կոոպերացիան առաջին
քայլն արդեն արել է: Վորպեսզի արտադրական բոլոր
պրոցեսներն ամեն կողմից կարողանան ընդգրկել և
վորպեսզի կարողանան ավելի ևս ընդհուպ մոտենալ
նրանց, բամբակաբուծական կոոպերացիան վերջերս
կազմակերպել է մոտ 300 գյուղական ընկերութեան-
ներ, վորոնց վրա պարտավորութեւն է դրել տեղիաց-
նել կոնտրակտացիան և նրա հետ կապված բոլոր
հարցերը: Դիտարկելով այդ ընկերութեանների կազմ-
ակերպումով բամբակաբուծական կոոպերացիան ընդ-
հուպ մոտենում է բամբակացան մասսաներին, վորից
հետո պետք է բարելավվի վոշ միայն բամբակացան-
ների ղեկավարելու գործը, այլ և սխտեմատիկ կոնտ-
րոլ պետք է սահմանվի կուտակցութեան և կառավա-
րութեան դիրեկտիվներն իրականացնելու վրա: Այդ
պատճառով բամբակաբուծական կոոպերացիան ամեն
միջոց պետք է գործ դնի գյուղական այդ ընկերու-
թեաններն ամբապնդելու: Մոտ որբերս կուրսեր են
բացվելու գյուղական ընկերութեանների նախագահ-
ներ պատրաստելու համար, իսկ նրանց համար հաշ-
վապահական աշխատատեղերի կուրսերն արդեն գոր-
ծում են: Անհրաժեշտ է կազմել մշտական, կենդանի
հրահանգչութեւնը՝ ամեն տեսակ ոգնութեւն հասցնելով
գյուղական ընկերութեաններին իրենց աշխատանքում:

1931 թիւը պետք է դառնա և կդառնա խորհրդ-
ութեանը արտատնտեսական բամբակից աղա-
ստեղծութեան տարին: Դա հնարավոր է հետևյալ
ովորումով:

1. Յեթե բամբակացանների արտադրական սպա-
ռարկումը պատշաճ բարձրութեան վրա դրված լինի,
2. յեթե տրակտորները ժամանակին և հիմնովին
պատրաստ լինեն աշխատելու, և կենդանի քաշող ուժը
կազմակերպված ոգտագործվի,
3. յեթե կատարվի ցանքերի բարձրացրած ծը-
րագիրը,
4. ջրային տնտեսութեան որգանները և կոլխոզ-
կոոպերատիվ ամբողջ սխտեմը լարեն իրենց բոլոր
ուժերը,
5. հարկավոր չափով ծավալվեն ագրո-կուլտու-
րական ձեռնարկումները, վորոնք աշակցում են խո-
նավութեւնը հողի տակ պահելուն և յեթե վոտոգման
ձեւերը ուղղորդւած լինեն,
6. յեթե ջրատնտեսութեան աշխատանքների հաշ-
վին յեղած աճման պլանները ճիշտ կազմեն,
7. ջրհանական տնտեսութեւնը վերականգնվի
ամբողջ 100 տոկոսով և Մուղանի ամբողջ սխտեմը
կարգի բերվի, ջրից ոգտվելու յեղանակը հիմնովին
բարեփոխվի և ջուրը տնտեսարար ծախսվի,
8. ստեղծվեն այնպիսի պայմաններ, վորոնք
կտրուկ բեկումն առաջացնեն գյուղացու մեջ դեպի
բամբակի մշակույթը և դրդեն նրան ժամանակին և
իրովին կատարել դաշտային բոլոր աշխատանքները,
9. ագիտացիոն-պրոպագանդական լայն աշխա-
տանքներ տարվեն,
10. կոնտրակտացիան դարձնեն իրական գործիք
արտադրական ներգործութեւն առնելու բամբակային
տնտեսութեան վրա, և փոխվի կանխտնտեսներ տա-
լու ձևը,

11. կոլխոզներում բամբակի հողամասի բեռնավորման նորմաները համաչափ լինեն ընտանի և արտադրական ուսուցանների հաշվառման որոշմի թույլ տված սահմաններում բանվոր վարձելու հաշվառման հետ,

12. խուսափվի կոլխոզներում բամբակի հողամասերը չափից դուրս ծանրաբեռնելուց, ինչպես վոր ալդ տեղի յե ունեցել Սալանի մարզում, ուր բեռնավորումը կոլխոզում հասցրել էլին միջին թվով ընտանիքին համարյա չոթ հեկտարի,

13. բարենպաստ պայմաններ ստեղծվեն բամբակային շրջաններում կոլեկտիվացման տեմպերն ուժեղացնելու (յերկարատե կոնտրակտացիայի զարգացում, մի շարք ՄՏԿ կազմակերպում, ագրոկոմպլեքսային աշխատանքների լայն աշխուժացում և այլն)։

Նոր կոլխոզների կազմակերպումը և հների ամրապնդումը հաջող կրնթանա, յեթե չքավորութունը և բատրակութունը յեռանդով համախմբվեն բամբակի կամպանիայի խնդիրների շուրջը և դառնան խորհրդային իշխանության հենարանը գյուղում։ Վճռական ախնա պայքար ձախ խտորումների և աջ թեքման— ալդ գլխավոր վտանգի դեմ,—սա յե բամբակի ճակատում հաղթության հիմնական պայմանը։

Մեր կուսակցության և նրա փորձված շտաբի՝ կենտրոնական կոմիտեի ղեկավարությամբ հաղթահարելով բոլոր դժվարությունները և ջարդ ու փշուր անելով ոպորտունիստներին ալից և ձախից, մենք անցնում ենք հարձակման նոր առաջադրանքների և հասնելու յենք նոր հաղթությունների բամբակարուծության ընագավառում, ինչպես մինչև այժմ հաղթանակել ենք մեր սոցիալիստական մեծ շինարարության լայնածավալ ճակատի նորագած բոլոր մասերում։



<< Ազգային գրադարան



NL0210508

31. 984